



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի N 132-Ա

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի չորրորդ նստաշրջանի դեկտեմբերի 21-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
- Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -18

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՄԱՏԻՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 21
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏՎԵՆՔԵՐԻ 21-Ի
ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԲՄՏԻ
ԹԻՎ 132-Ա ՈՐՈՇՄԱՆ



ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգը հաստատելու մասին

/Զեկ. Դ. Խուդաթյան/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին

/Զեկ. Դ. Խուդաթյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2024 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին

/Զեկ. Ռ. Մանուկյան/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Ռ. Մանուկյան/

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին

/Զեկ. Ռ. Մանուկյան/

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 217-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ. Ռ. Մանուկյան/

8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին

/Զեկ. Թ. Շառոյան/

9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 28-ի թիվ 066-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ. Թ. Շառոյան/

10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 086-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկ. Ա. Աբգարյան/

11. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բարեկարգում» տնօրինության աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

12. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ջրամատակարար» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

13. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի լուսավորություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

14. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի գբոսայգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

15. Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված գույքը ենթավարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

16. Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալությամբ տրամադրված գույքը ենթավարձակալության տրամադրելու համաձայնություն տալու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

17. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող ապրանքանյութական արժեքների ամենամյա գույքագրման արդյունքները հաստատելու մասին

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

18. ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 7-ի թիվ 081-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և և Արմավիր համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին

/Զեկ. Ա. Խաչատրյան/

19. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 7-ի թիվ 088-Ա որոշման մեջ լրացում կատարելու

/Զեկ. Ա. Հովհաննիսյան/

20. Արմավիր համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցվածքները, աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Լ. Աֆրիկյան/

21. Արմավիր համայնքի արտադպրոցական դաստիարակություն իրականացնող հաստատությունների աշխատողների քանակը, խմբերի և սաների թիվը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Լ. Աֆրիկյան/

22. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Լ. Աֆրիկյան/

23. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

/Զեկ. Լ. Աֆրիկյան/

24. Տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին

/Զեկ. Լ. Աֆրիկյան/

25. Տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին

/Զեկ. Լ. Աֆրիկյան/

26. Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություններ սահմանելու մասին

/Զեկ. Ա. Տիգրանյան/

27. Օգնություն հատկացնելու մասին

/Զեկ. Ա. Խաչատրյան/



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի N 133-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 2201-Ա որոշումը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող, Արմավիր քաղաք, Հ. Բաղդամյան փողոց 39 հասցեում գտնվող 4.645 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 04-001-0202-0001/ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով ուղղակի վաճառքով օտարել «Առսթոռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ներդրումային ծրագրի իրականացման նպատակով:
2. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում «Նորք» թաղամասի կառուցապատման ներդրումային ծրագրի շրջանակներում հողամասի ուղղակի վաճառքի ձևով օտարման գործարքի հիմնական պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -18

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՄԱՏԻՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱՋ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿ

ԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 21
ք. Արմավիր





ՀԱՎԵԼՎԱԾ
 ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի
 ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
 ԹԻՎ 133 ԱՌՈՂՇՄԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
 ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ՆՈՐՔ» ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
 ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐՄԱՆ
 ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Վաճառող	Արմավիրի մարզի Արմավիր համայնք
2. Գնորդ	«Առաթոռ» ՍՊԸ
3. Առարկան	«Նորք» թաղամասի կառուցապատման համար ք. Արմավիր, Հ. Բաղդամյան փ., 39 հասցեի հողատարածքի ուղղակի վաճառք գնորդին Հողատարածքի կադաստրային ծածկագիր՝ 04-001-0202-0001, սեփականության վկայական՝ 18042023-04-0067
4. Պայմանագրի կնքման ժամկետը	«Նորք» թաղամասի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման նպատակով՝ համայնքը ներդրողի հետ կնքում է հողամասի օտարման պայմանագիր (վաճառողի կողմից հողատարածքի օտարման վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում): Ներդրումային ծրագրի մեկնարկ է համարվում գնորդի կողմից, օրենսդրությամբ սահմանված կարգով, անհրաժեշտ շինարարության թույլտվության ստացման ամսաթիվը:
5. Պայմանագրի գինը	Հողատարածքը գնորդին կօտարվի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է 56.715.450 (հիսունվեց միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ

<p>6. Պայմանագրով հողի սեփականության իրավունքի փոխանցումը</p>	<p>Ներդրողի սեփականության իրավունքը հողամասի նկատմամբ ծագում է հողամասի օտարման պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից</p>
<p>7. Պայմանագրի կնքման ծախսերը (հատակագծի, հասցեի տրամադրում, պայմանագրի նոտարական վավերացում և այլն)</p>	<p>Գնորդի հաշվին</p>
<p>8. Կողմերի պարտավորությունները</p>	<p>1) Վաճառողը պարտավորվում է՝</p> <p>ա. գնորդին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից և փաստացի տիրապետումից ազատ հողատարածք,</p> <p>բ. իր լիազորությունների սահմաններում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, գնորդին տրամադրել բնակելի թաղամասի կառուցման և դրա համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները:</p> <p>2) Գնորդը պարտավորվում է՝</p> <p>ա. պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում վաճառողին վճարել հողամասի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը, որը կազմում է 56.715.450 (հիսունվեց միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ,</p> <p>բ. պայմանագրի կնքումից հետո ներդրումային ծրագրի իրականացման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, անհրաժեշտ շինարարության թույլտվություն ստանալուց հետո 2 տարվա ընթացքում Արմավիր համայնքի բյուջե հանրօգուտ նպատակով որպես նվիրատվություն փոխանցել 28.357.725 (քսանութ միլիոն երեք հարյուր հիսունյոթ</p>

հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ,

գ. 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո 1 տարվա ընթացքում Արմավիր համայնքի բյուջե հանրօգուտ նպատակով որպես նվիրատվություն փոխանցել 28.357.725 (քսանութ միլիոն երեք հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ,

դ. «Նորք» թաղամասի կառուցումը և թաղամասն ամբողջությամբ շահագործման հանձնելը պետք է իրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ շինարարության թույլտվություն ստանալուց հետո 5-8 (հինգից ութ) տարվա ընթացքում: Եթե 5 (հինգ) տարվա ընթացքում ներդրումային ծրագրով նախատեսված կառուցապատումը չի իրականացվում առնվազն 50 (հիսուն) տոկոսի չափով, ապա սահմանվում է տուգանք՝ չկատարված ներդրումների ծավալի 1 (մեկ) տոկոսի չափով: Այն դեպքում, եթե ներդրումային ծրագրի վերջնաժամկետ համարվող 8-րդ (ութերորդ) տարվան հաջորդող 1 (մեկ) տարվա ընթացքում ներդրումային ծրագիրը չի կատարվում ամբողջությամբ, ապա վաճառողն իրավունք է ձեռք բերում լուծելու պայմանագիրը, որի արդյունքում կդադարեցվի գնորդի սեփականության իրավունքը, իսկ եթե հողամասի տարածքում գնորդի կողմից կատարված լինեն անբաժանելի բարելավումներ (շենքշինություններ, կոմունիկացիաներ և այլն), ապա դրանք սեփականության իրավունքով անցնում են վաճառողին, որի դիմաց գնորդը չի ստանում որևէ փոխհատուցում,

ե. հողամասը կարող է օգտագործվել բացառապես սույն որոշմամբ հավանության արժանացած 31.893.411.168 (երեսունմեկ միլիարդ ութ հարյուր հինսուներեք միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար հարյուր վաթսունութ) ՀՀ դրամի չափով ներդրումային ծրագրի շրջանակներում՝ «Նորք» թաղամասի կառուցապատման համար,

զ. իր կողմից ձեռք բերվող հողատարածքը, մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը, օտարել միայն վաճառողի համաձայնությամբ: Հողատարածքը նոր գնորդին կարող է օտարվել միայն գնորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված

	<p>պարտավորությունները նոր գնորդի կողմից ստանձնելու դեպքում,</p> <p>է. շինարարության մեկնարկից հետո 4 (չորս) տարվա ընթացքում ծրագրի իրականացման համար նախատեսված հողատարածքում կատարել 320-380 (երեք հարյուր քսանից երեք հարյուր ութսուն) քմ մակերեսով մանկապարտեզի և 60-80 (վաթսունից ութսուն) քմ մակերեսով գրասենյակի (վարչական շենքի) օրենսդրությամբ սահմանված կարգերին համապատասխան կառուցման և կահավորման աշխատանքներ և արդյունքը սեփականության իրավունքով անհատույց փոխանցել վաճառողին,</p> <p>ը. ներդրումային ծրագրի մեկնարկին հաջորդող 5-րդ (հինգերորդ) տարվա ավարտից հետո եռամսյա ժամկետում վաճառողին ներկայացնել նախորդ տարիների ընթացքում ներդրումային ծրագրի իրականացման վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ այլ տեղեկատվություն, իսկ ներդրումային ծրագրի վերջնաժամկետ համարվող 8-րդ (ութերորդ) տարվան հաջորդող 1 (մեկ) տարվա ընթացքում վաճառողին ներկայացնել վերջնական հաշվետվություն: Հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքում 60-օրյա (վաթսունօրյա) ժամկետում Արմավիր համայնքի բյուջե վճարում է տուգանք 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:</p> <p>Հաշվետվությունները պետք է հավաստեն գնորդի կողմից ներդրումային ծրագրի իրականացման նպատակով արված ծախսերը և կատարված աշխատանքների ծավալները:</p>
--	--

<p>9. Կողմերի պատասխանատվությունը</p>	<p>1) Կողմերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար:</p> <p>2) Այն պարագայում, երբ պայմանագիրը կնքելու օրվանից հետո 2 (երկու) տարվա ընթացքում գնորդը չի սկսում օգտագործել հողամասը նպատակային նշանակությամբ, ապա վաճառողն իրավունք է ձեռք բերում լուծելու պայմանագիրը, որի արդյունքում կդադարեցվի գնորդի սեփականության իրավունքը:</p> <p>3) Այն դեպքում, եթե հողամասի տարածքում գնորդի</p>
---------------------------------------	--

կողմից կատարված լինեն անբաժանելի բարելավումներ, ապա դրանք սեփականության իրավունքով անցնում են վաճառողին, որի դիմաց գնորդը չի ստանում որևէ փոխհատուցում:

4) Գնորդը պատասխանատվություն է կրում՝

ա. պայմանագրի գնի վճարման ժամկետի խախտման համար, որի դեպքում վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի նկատմամբ կհաշվարկվի տույժ՝ կետանցի օրվանից մինչև պարտավորության կատարման օրը՝ համապատասխան ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների կրկնապատիկի չափով: Վճարման ժամկետն ավելի քան 180 օր ուշացնելու դեպքում վաճառողին իրավունք է վերապահվում լուծելու պայմանագիրը: Մինչև պայմանագրի լուծման պահը գնորդի կողմից վճարված գումարները չեն վերադարձվում,

բ. կառուցապատման ժամկետների խախտման համար չկառուցապատված հողատարածքի միավորի պայմանագրի գնի նկատմամբ պետք է հաշվարկվի տույժ՝ կետանցի օրվանից մինչև պարտավորության կատարման օրը՝ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների կրկնապատիկի չափով,

գ. կառուցապատման ժամկետներն ավելի քան 180 (հարյուր ութսուն) օր ուշացնելու դեպքում վաճառողին իրավունք է վերապահվում լուծելու պայմանագիրը: Մինչև պայմանագրի լուծման պահը գնորդի կողմից վճարված գումարները չեն վերադարձվում: Պայմանագրի այլ պայմանների խախտման համար պատասխանատվությունը կսահմանվի պայմանագրով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի N 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2024 թվականի վարձատրության չափը սահմանել 590 000 /հինգ հարյուր հինսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -18

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՄԱՏԻՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



2023թ. դեկտեմբերի 21
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի N 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի 2024 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1, 2 հավելվածների:
- Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 218-Ա որոշումը:
- Որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -18

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ *[Signature]*

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ *[Signature]*

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ *[Signature]*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ *[Signature]*

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ *[Signature]*

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ *[Signature]*

ՄԱՏԻՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ *[Signature]*

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ *[Signature]*

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ *[Signature]*


ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ *[Signature]*

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ *[Signature]*

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ *[Signature]*


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. դեկտեմբերի 21
ք. Արմավիր



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի
ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԹԻՎ 135-Ա ՈՐՈՇՄԱՆ



ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔ

1. Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
2. Ֆինանսատնտեսագիտական բաժին
3. Իրավաբանական բաժին
4. Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին
5. Գույքահարկի հաշվառման, սպասարկման և հավաքագրման բաժին
6. Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժին
7. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին

ՀԱՎԵԼ ԿԱԾ 2
 ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
 2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ի
 ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ԵՒ ՍԻ
 ԹԻՎ 185-Ա ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ
 ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Աշխատողների քանակը՝ 121:

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (սահմանվում է հասարիքային մեկ միավորի համար)	Աշխատավարձի չափը
-----	----------------------	-----------------------	--	---------------------

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

1.	Համայնքի ղեկավար	1	590 000	590 000
2.	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	475 000	475 000
3.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	450 000	450 000
4.	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	370 000	370 000
5.	Համայնքի ղեկավարի օգնական	2	235 000	470 000
Ընդամենը		6		2 355 000

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

6.	Վարչական ղեկավար	2	350 000	700 000
7.	Վարչական ղեկավար	8	330 000	2 640 000
Ընդամենը		10		3 340 000

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

8.	Աշխատակազմի քարտուղար	1	400 000	400 000
----	-----------------------	---	---------	---------

9.	Աշխատակազմի գլխավոր մասնագետ	6	185 000	1 110 000
----	------------------------------	---	---------	-----------

10.	Աշխատակազմի առաջատար մասնագետ	21	155 000	3 255 000
-----	-------------------------------	----	---------	-----------

11.	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	2	145 000	290 000
-----	-----------------------------------	---	---------	---------

Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

12.	Բաժնի պետ	1	235 000	235 000
-----	-----------	---	---------	---------

13.	Գլխավոր մասնագետ	2	185 000	370 000
-----	------------------	---	---------	---------

14.	Առաջատար մասնագետ	1	155 000	155 000
-----	-------------------	---	---------	---------

15.	Առաջին կարգի մասնագետ	3	145 000	435 000
-----	-----------------------	---	---------	---------

Ֆինանսատնտեսագիտական բաժին

16.	Բաժնի պետ	1	235 000	235 000
-----	-----------	---	---------	---------

17.	Գլխավոր մասնագետ	2	185 000	370 000
-----	------------------	---	---------	---------

18.	Առաջին կարգի մասնագետ	3	145 000	435 000
-----	-----------------------	---	---------	---------

19.	Երկրորդ կարգի մասնագետ	1	130 000	130 000
-----	------------------------	---	---------	---------

Իրավաբանական բաժին

20.	Բաժնի պետ	1	235 000	235 000
-----	-----------	---	---------	---------

21.	Գլխավոր մասնագետ	1	185 000	185 000
-----	------------------	---	---------	---------

22	Գլխավոր մասնագետի ՔԿԱԳ	2	185 000	370 000
23	Առաջադար մասնագետի ՔԿԱԳ	1	170 000	170 000
24	Առաջադար մասնագետի	1	155 000	155 000
25	Առաջին կարգի մասնագետի	1	145 000	145 000

Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համապիրությունների աշխատանքների համակարգման բաժին

26	Բաժնի պետ	1	235 000	235 000
27	Գլխավոր մասնագետի	1	185 000	185 000
28	Առաջադար մասնագետի	3	155 000	465 000
29	Առաջին կարգի մասնագետի	2	145 000	290 000

Գույքահարկի հաշվառման, սպասարկման և հավաքագրման բաժին

30	Բաժնի պետ	1	235 000	235 000
31	Գլխավոր մասնագետի	1	185 000	185 000
32	Առաջադար մասնագետի	1	155 000	155 000
33	Առաջին կարգի մասնագետի	2	145 000	290 000

Բյուջեային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժին

34	Բաժնի պետ	1	235 000	235 000
35	Գլխավոր մասնագետի	1	185 000	185 000
36	Առաջադար մասնագետի	1	155 000	155 000
37	Առաջին կարգի մասնագետի	3	145 000	435 000

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին

38	Բաժնի պետ	1	235 000	235 000
39	Գլխավոր մասնագետի	2	185 000	370 000
40	Առաջադար մասնագետի	1	155 000	155 000

41	Առաջին կարգի մասնագետ	1	145 000	145 000
	Ընդամենը	74		12 635 000

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

42	Տնփեսվար	1	185 000	185 000
43	Գործավար	2	145 000	290 000
44	Վարորդ	1	175 000	175 000
45	Պահակ	2	120 000	240 000
46	Հավաքարար	13	120 000	1 560 000
47	Անվտանգության պարասխանադու	1	145 000	145 000
48	Հնոցապան-օպերատոր (սեզոնային՝ նոյեմբերի 1-ից մարտի 31-ը)	3	105 000	315 000
	Ընդամենը	23		2 910 000

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

49	Անասնաբույժ	8	105 000	840 000
	Ընդամենը	8	105 000	840 000
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ	121		22 080 000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2023 թվականի N 136-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արդարադատության նախարարության 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N/27.1/53655-2023 պետական փորձագիտական եզրակացությունը՝

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում 2024 թվականի համար տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի և տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -18

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽՈՒԴԱԹՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԱՂԱԽԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՐՈՅԱՆ ԱՐՏԱԿ

[Handwritten signature]

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

[Handwritten signature]

ԴՈՒԽՆՅԱՆ ՀԱՅԿ

[Handwritten signature]

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ

[Handwritten signature]

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

[Handwritten signature]

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

[Handwritten signature]

ՄԱՏԻՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

[Handwritten signature]

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

[Handwritten signature]

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱՁ

[Handwritten signature]

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

[Handwritten signature]

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ


[Handwritten signature]

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



2023թ. դեկտեմբերի 21
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի
ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ-ՆՈՍԻՒ
ԹԻՎ 136-Ն ՈՐՈՇՄԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանել՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը քաղաքային բնակավայրերում հաշվարկել 1.4 գործակցի կիրառմամբ՝ 21000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ.

բ. մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը քաղաքային բնակավայրերում հաշվարկել 1.4 գործակցի կիրառմամբ՝ 21000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝

ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ.

Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ հաշվարկել 1.5 գործակցի կիրառմամբ.

դ.3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

-Սույն ենթակետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

Գոտի	Գոտիականության գործակից
1-4	5.0
5-8	4.0
9-12	3.0
13-16	2.0
17-20	1.0

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա.մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամի և 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

բ.20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 /տասը հազար/ ՀՀ դրամի և 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

1.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար

1) այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 60000 /վաթսուհ հազար/ ՀՀ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, բացառությամբ 17-րդ գոտու /գ. Մյասնիկյան/, հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ.

-1.1-րդ կետի 1-ին ենթակետի «ա»-ից «դ» պարբերությունների նկատմամբ կիրառել նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4.1-րդ մասը. այն է՝ անկախ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված գործակցիցների կիրառությունից՝ շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է 0.5 գործակցի կիրառմամբ: Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության երկարաձգման համար տեղական տուրքը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված դրույքաչափերով:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառուցների, վերնակառուցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը քաղաքային բնակավայրերում հաշվարկել 2.0 գործակցի կիրառմամբ՝ 6000 /վեց հազար/ ՀՀ դրամ.

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառուցների, վերնակառուցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար

սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը քաղաքային բնակավայրերում հաշվարկել 2.0 գործակցի կիրառմամբ՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ.

4. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 /երկու հարյուր/ ՀՀ հազար դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

5. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 /երկու հարյուր/ ՀՀ հազար դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը քաղաքային բնակավայրերում, հաշվարկել 1.5 գործակցի կիրառմամբ՝ 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

6. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 /երկու հարյուր/ ՀՀ հազար դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

7. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 45 000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ.

8. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

9. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000/տասներեք հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 9750 /ինը հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ.

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 18750 /տասնութ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 33750 /երեսուներեք հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 100000/մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ.

2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 7500/յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 /տասներեք հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 9750 /ինը հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ.

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 18750 /տասնութ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 33750 /երեսուներեք հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ.

10. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար 350 /երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

11. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որի նկատմամբ քաղաքային բնակավայրում կիրառվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

4) խաղատների համար՝ 1000000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ,

5) շահումով խաղերի համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

6) վիճակախաղերի համար՝ 150000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, որի նկատմամբ քաղաքային բնակավայրում կիրառվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 225 000 /երկու հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

12. Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 3750 /երեք հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 11250 /տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ.

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 22500 /քսաներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հարային սննդի օբյեկտի համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ, որի նկատմամբ քաղաքային բնակավայրերում կիրառվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1,5 անգամ ավել՝ 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ, իսկ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը գյուղական բնակավայրերում, հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ՝ 37500 /երեսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

